







Ճանապարհաշինություն. 2015 թ. ընթացքում Արաբկիր վարչական շրջանում հիմնանորոգվել են Փափազյան, Քեռու, Արաբկիր 35, 43, 49 և ևս 13 փողոցներ՝ 31602 քմ ընդհանուր տարածքով: **Ասֆալտապատվել են** 103371 քմ ընդհանուր տարածքով փողոցներ, մայթեր, բակեր, որից՝ փողոցներում ասֆալտապատվել է 40142 քմ, մայթերում՝ 2000 քմ, բակերում՝ 43589 քմ:








Մայթերի, պուրակների սալիկապատումն
ընդգրկել է 1573 քմ տարածք:














Հենապատեր են կառուցվել,
վերանորոգվել Արաբկիր վարչական շրջանի 10 հասցեներում՝
1980 քմ ընդհանուր տարածքով:

Կանաչապատում



Նորաստեղծ կանաչապատ հատվածներն ընդհանուր առմամբ կազմել են 3065 քմ:
Ստեղծվել է 5100 քմ ընդհանուր մակերեսով 3 հանգստի գոտի:
Կառուցվել են պուրակներ՝ Փափազյան 16ա հասցեի տարածքում՝ 1800 քմ,
Մամիկոնյանց 3 հասցեի տարածքում՝ 2200 քմ,
Շրջանցիկ թունել՝ հ. 34 մանկապարտեզի հարակից տարածքում՝ 1100 քմ:
Անցկացվել է 2200 գծմ երկարությամբ **ոռոգման նոր ցանց**, վերանորոգվել են ոռոգման ցանցի վնասված՝ 1800 գծմ ընդհանուր երկարությամբ հատվածներ:





Բնակֆոնդի պահպանում

9 հասցեներում վերականգնվել և թարմացվել են **շենքերի ճակատային մասի** թափվող սալիկները:
Բարեկարգվել է **150 մուտք:**
Վերանորոգվել է 11053 քմ ընդհանուր մակերեսով տանիք, որից՝ 5398 քմ՝ հարթ, 5655 քմ՝ թեք:
Ամրացվել է վթարային 58, նորոգվել՝ 255 **պատշգամբ:**
Համատիրությունների հետ ամենօրյա համագործակցության արդյունքում խնդիրներն անհապաղ լուծում են ստանում: Տրամադրված նյութերով համատիրությունները վերանորոգել են 1740 քմ թեք տանիք:











Բարեկարգվել է 19390 քմ ընդհանուր մակերեսով 67 **բակային տարածք:** Դրանք ազատվել են ապօրինի կառույցներից: Ապամոնտաժվել է 107 ավտոտնակ: Հանրային նշանակության բարեկարգ հատվածի է վերածվել ապօրինի հողազավթված 3430 քմ տարածք:
55 հասցեներում կառուցվել են **խաղահրապարակներ**:
Խաչատրյան 29 հասցեի բակում կառուցվել է **մինի ֆուտբոլի խաղադաշտ**:
Բակային տարածքները համալրվել են մարզագույքով: Տեղադրվել են նստարաններ, տաղավարներ, մանկական խաղեր:

















Համագործակցություն «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Երևան Ջուր», «Երևան գազ» ՓԲԸ-ների հետ


Ջրամատակարարման համակարգի վերանորոգում՝ 3620 գծմ
Կոյուղատար համակարգի վերանորոգում՝ 860 գծմ
Գազաֆիկացում՝ 2420 գծմ
Էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգի նորոգում՝ 4950 գծմ
Արտաքին լուսավորության ցանցի անցկացում՝ 3250 գծմ, տեղադրվել է 60 սյուն և 53 պատային ամրացում:



Սոցիալական ոլորտ



Կազմակերպվել է 235 ծնողների **այցելություն ԼՂՀ-ում և ՀՀ սահմանամերձ գոտիներում ժամկետային** զինծառայության մեջ գտնվող, արաբկիրցի **զինծառայողներին**:



Կառուցվել է 31 **թեքահարթակ:**



Սոցիալապես անապահով հարյուրավոր ընտանիքների տրվել է դրամական աջակցություն: Ճամբար մեկնող 100 երեխայի նվիրվել են մարզաշապիկներ, արևապաշտպան գլխարկներ, քաղցրավենիք և խաղեր:





















Մանկապարտեզի ավագ խմբերի 748 և սոցիալապես անապահով ընտանիքների 320 երեխաների հատկացվել են դպրոցական պայուսակներ:

Սոցիալական ոլորտ







«Էրեբունի-Երևան 2797» տոնակատարության սոցիալական բաղադրիչի շրջանակում 290 ընտանիքի տրամադրվել է անհրաժեշտ կենցաղային տեխնիկա:
Տոնին ապահովվել է Լոռու մարզից և ԼՂՀ Մարտունի քաղաքից տասնյակ երեխաների մասնակցություն:








Առողջապահության ոլորտ







Ֆրանսիայի Պլեսի Ռոբինսոն քաղաքի հետ համագործակցության շրջանակում Արաբկիրի հ. 11 պոլիկլինիկայում բացվել է ատամնաբուժական նոր բուժկաբինետ և տրամադրվել են գերժամանակակից սարքավորումներ:







Պետպատվերի շրջանակում տասնյակ սոցիալապես անապահով անձանց տրվել են միջնորդագրեր՝ անվճար բուժօգնություն ստանալու համար:







Նախադպրոցական հիմնարկների համար գույքի ձեռքբերում.
Ձեռք են բերվել զգեստապահարան, բազմահարկ մահճակալներ, մանկական աթոռներ, սեղաններ, սալօջախ, ջեռոց, սառնարան:
Անվճար հիմունքներով մանկապարտեզ է հաճախում 2510 երեխա:

Նախադպրոցական հիմնարկների վերանորոգում, հիմնանորոգում.
Հիմնանորոգվել է հ. 25, առավել ծավալային վերանորոգվել հ. 26, իսկ մասնակի վերանորոգում է իրականացվել բոլոր մանկապարտեզներում:







Միջոցառումներ

Կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված պետական և ազգային տոներին, ինչպես նաև՝ տարաբնույթ թեմատիկ հանդեսներ, խաղեր և մրցույթներ:
























Հիմնանորոգվել են հհ. 5, 28, 29, 36 գրադարանները, մասնակի վերանորոգում է իրականացվել մշակութային բոլոր կենտրոններում:









Մշակութային կենտրոններ հաճախող երեխաների թիվը.

Կ. Սարաջյանի անվան երաժշտական դպրոց է հաճախում 490, Ալ. Հեքիմյանի անվան երաժշտական դպրոց՝ 464 երեխա: Հ. 5 և հ. 6 գրադարաններից օգտվում է 3685 ընթերցող:

§Երևանյան ամառ 2015¦ ծրագրի շրջանակում Քանաքեռ ՀԷԿ, Տոլբուխին 4, Փափազյան 21/1, Վրացական 4, 6, Սունդուկյան 28, Ավետիսյան 74,76 հասցեներում կազմակերպվել են բակային ճամբարներ:


























Սպորտդպրոցներ հաճախող երեխաների թիվը.
Մենապայքարային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց են հաճախում 162, Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց՝ 460, Երևանի Ալ. Գրիգորյանի անվան սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց՝ 240, Արաբկիրի խաղային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց՝ 426 երեխա և պատանի:








Արաբկիր վարչական շրջանի մարզիկներն ու թիմերը մրցանակային առաջատար տեղեր են նվաճել ինչպես վարչական շրջանի, այնպես էլ համաքաղաքային, հանրապետական ու միջազգային մրցաշարերում:
















Արաբկիր վարչական շրջանի պատվիրակությունը հյուրընկալվել և մասնակցել է Պլեսի Ռոբինսոնի քաղաքապետարանին հարակից պուրակում կազմակերպված Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառմանը: Վարչական շրջանի կողմից Պլեսի Ռոբինսոնի քաղաքապետարանի ցուցասրահում կազմակերպվել է Հայոց ցեղասպանության թեմայով ցուցահանդես, տեսաֆիլմերի ցուցադրություն: Ցուցահանդեսի այցելուներին տրամադրվել են Մեծ եղեռնի վերաբերյալ գրականություն, օրացույցեր և այլ նյութեր: §Արաբկիր¦ ֆուտբոլային թիմը Ֆրանսիայում մասնակցել է Պլեսի Ռոբինսոնի ֆուտբոլային ակումբի կողմից կազմակերպված մրցաշարին:











